ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

30-ը օգոստոսի 2017թ.

Նախագահ՝ Կ. Հ. Հովսեփյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *Ուսումնական գործընթացի կազմակերպում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *2017-18թթ. ուս. տարվա I կիսամյակի դասացուցակների հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
4. *Անվանական կրթաթոշակի նշանակում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Կ. Հ. Հովսեփյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Կ. Հ. Հովսեփյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Կ. Հ. Հովսեփյանը: Նա ներկայացրեց 2017-18թթ. ուստարվա ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանը՝ կցվում է արձանագրության տեքստին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Ա. Սիմոնյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի պլանը կազմվել է ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան և առաջարկեց ներկայացնել հաստատման:

Ընդհանուր քննարկումից հետո առաջարկվեց հաստատել 2017-18թթ. ուստարվա I կիսամյակի գիտխորհրդի աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2017-18թթ. I կիսամյակի ուստարվա գիտխորհրդի աշխատանքային պլանը:

Օրակարգի երկրորդ հարցի շուրջը հանդես եկավ ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Կ. Հ. Հովսեփյանը: Ներկայացրեց նոր՝ 2017-18 ուսումնական տարվա ներֆակուլտետային գործընթացի կազմակերպման հետ կապված ընթացիկ հանձնարարականները՝ ընդգծելով, որ ֆակուլտետում անհրաժեշտ է պահպանել ուսումնական պրոցեսի պահանջները ըստ համապատասխան կարգի.

- Անհարգելի բացակայությունը հասցնել նվազագույնի
- Ուսումնական պրոցեսը կազմակերպել հաստատված ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցին համապատասխան:
- Դասապրոցեսը կազմակերպել հաստատված դասացուցակին համապատասխան և այլն:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ Կ. Հ. Հովսեփյանը: Նա ներկայացրեց 2017-18 թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով, ըստ ամբիոնային ուսումնական ծանրաբեռնվածության պլանների:

Դասախոսների պահանջարկ չկա, ըստ դասաժամերի բաշխվել են բոլոր առարկաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- §Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության¦ ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա նշեց, որ դասացուցակը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան: Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նա առաջարկեց հաստատել 2017-18թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

Այնուհետև ելույթ ունեցան Գ. Վ. Գուլակյանը, Ա. Ս. Սիմոնյանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացված դասացուցակին և որոշեցին ներկայացնել տնօրենություն հաստատելու:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2017-18թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

Այնուհետև դեկանի ժ/պ Կ. Հ. Հովսեփյանը օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ ներկայացրեց ֆակուլտետի անվանական կրթաթոշակի հավակնորդ ,,Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության,, երրորդ կուրսի ուսանողուհի Անգին Հրաչյայի Ծատուրյանի թեկնածությունը, որը հավակնում է անվանական կրաթոշակի:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին 2017-18թթ. ուստարվա I կիսամյակում `§Մոնթե Մելքոնյանի¦ անվան անվանական կրթաթոշակ նշանակել ,,Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության,, երրորդ կուրսի ուսանողուհի Անգին Հրաչյայի Ծատուրյանին երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, պատշաճ վարքագիծ դրսևորելու և հասարակական ակտիվ գործունեության համար:

ՆԱԽԱԳԱՀ **Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**